



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՔԱՐՈՉ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՄԱՍԻՆ

«Տէրն սասց Ինձ.
«Իմ Որդին ես Դու, ես
ես այսօր Քեզ ծնեցի»¹»:



Սուրբ Գրքի ուսուցանութեամբ՝ Քրիստոս երկու ծնունդ ունի: Նախ՝ Բանն Աստուած ծնունդն է Հօր՝ յաւիտեաններից եւ ժամանակներից առաջ՝ ըստ Դատի սաղմոսի, ուր Հայրն ասում է Որդուն. «Քեզ ծնեցի նախքան Արուեսակը»²: Իսկ երկրորդ ծնունդը ժամանակի մէջ է, ինչպէս ասում է այս սաղմոսում. «Տէրն սասց Ինձ. «Իմ Որդին ես Դու, ես ես այսօր Քեզ ծնեցի»³»: Այստեղ նշում են երկու ծնունդները. «Իմ Որդին ես Դու» ասելով՝ յաւիտեանական Ծնունդն է յայտնում, իսկ «այսօր Քեզ ծնեցի»՝ նշանակում է Նրա երեւալը ժամանակի մէջ: Այն Ծնունդն անմարմին է, իսկ այս՝ մարմնով: Այն Հօրից է՝ առանց մօր, իսկ այս՝ մօրից՝ առանց հօր: Այն երկնքում է, իսկ այս՝ երկրի վրայ: Այն առանց պատճառի Ծնունդ է, իսկ այս՝ պատճառաւոր, քանզի Աստուած մարդացաւ մեր փրկութեան համար: Աստուած խոնարհուեց, որպէսզի մարդկանց բարձրացնի: Աստուծոյ Որդին Մարդու Որդի եղաւ, որպէսզի մեզ Աստուծոյ որդի դարձնի: Նա ծնուեց մարմնով, որպէսզի մենք ծնուենք հոգով: Զանգի երբ վերստին ծնում ենք սուրբ Աւագանի Մկրտութեամբ, Ծնորհով Աստուծոյ որդի եւ Քրիստոսին ժառանգակից ենք դառնում. «Նրանց իշխանութիւն տուեց՝ լինելու Աստուծոյ որդիներ»⁴: Եւ մեր Քրիստոս Աստուծոյ



Երևան 1995

1 Սաղմ. Բ 7
2 Տե՛ս Սաղմ. ձԹ 3:
3 Սաղմ. Բ 7
4 Յովհ. Ա 12

Ծննդեան եւ Յայտնութեան այս տօնը սկիզբն ու հիմքն է բոլոր բարիքների եւ փառաւոր շնորհների: Եւ ոչ միայն այս, այլեւ Աստուածորդու բոլոր տնօրինական տօների եւ բոլոր միւս տօների ու հոգեւոր ուրախութիւնների սկիզբը, հիմքն ու գլուխն է: Որը եւ կլուսաբանենք այս քարոզի վեց գլուխներով:

Ա

Մեր Զրիստոս Աստուծոյ Ծննդեան եւ Յայտնութեան տօնը բոլոր տօների սկիզբն ու հիմքն է՝ չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ ինչպէս որ ի սկզբանէ Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու հետ խորհուրդ անելով ստեղծեց մարդուն **Իր պատկերով [եւ նմանութեամբ]**⁵, նոյնպէս եւ այստեղ Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու հետ ազգերից ու յաւիտեաններից ծածկուած խորհուրդն այժմ յայտնեց Իր Բանի մարդեղութեան միջոցով: Զանգի Հայրը կանցաւ եւ առաքեց Որդուն, եւ Սուրբ Հոգին մաքրագործեց սուրբ Կոյսին եւ մարմնացրեց Որդուն: Միաժին Որդին մարդացաւ եւ ծնունեց Կոյսից նոր արարչագործութեան եւ մարդկային ցեղի փրկութեան համար: Սա էր ծածուկ խորհուրդը, որ յայտնի դարձաւ այսօր. այս պատճառով այսօր բոլոր տէրունական տօների սկիզբն է:

Երկրորդ՝ այն, ինչն Օրէնքն ու Մարգարէները ժամանակներ առաջ կանխաձառեցին, թէ Աստուած պիտի երեւայ մարմնով եւ շրջի մարդկանց մէջ, այսօր իրականացաւ. այս պատճառով այսօր բոլոր տօների սկիզբն ու հիմքն է:

Երրորդ՝ Ադամի ու Եւայի յանցանքից յետոյ, որի համար նրանք դատապարտուեցին (ինչպէս ասաց Աստուած. «**Երկիրը** [փուշ ու տատասկ կբուսցնի քեզ]⁶ եւ «**տրտմութեամբ որդի կծնես**»⁷), [ողջ] մարդկային ցեղը պատուիասուեց՝ անէծքի

5 Տե՛ս Ծն. Ա 26:

6 Տե՛ս Ծն. Գ 17:

7 Ծն. Գ 16

տակ ընկնելով: [Արդ,] այսօր այդ անէծքը վերցուեց, դատապարտութիւնը վերացաւ, եւ տրտմութեամբ ծնունդը՝ ուրախութեան փոխուեց, ինչպէս հրեշտակն է ասում սուրբ Կոյսին. «**Ուրախացի՛ր, բերկրեա՛լ, Տէրը քեզ հետ է**»⁸, եւ՝ «**Կծնես որդի**»⁹: Այս պատճառով այսօր բոլոր տօների եւ մարդկանց փրկութեան գլուխն ու սկիզբն է:

Չորրորդ՝ Ծննդեան տօնն, ըստ կարգի, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման եւ միւս տօներից առաջ է: Զանգի մեր Տէր Յիսուս Զրիստոս նախ մարմնով ծնունեց Կոյսից եւ ապա եկաւ Տաճար, այնուհետեւ՝ երեսուն տարի յետոյ ծննդեան նոյն օրը մկրտուեց, ապա խաչուեց, թաղուեց ու յարութիւն առաւ եւ յետոյ համբարձուեց երկինք:

Այսքան պատճառներով Ծննդեան տօնը ս. Եկեղեցում ողջ տարուայ ընթացքում կատարուող բոլոր տօների հիմքը, գլուխն ու սկիզբն է:

Բ

Այսօր՝ յունուարի 5-ի գիշերուանից սկսում ենք նաւակատիքը եւ կատարում մեր Զրիստոս Աստուծոյ Ծննդեան նախատօնակը: Արդ, այսօր ոչ թէ Աւետումն ենք տօնում, ինչպէս ասում են հերձուածողները (քանզի Աւետման տօնը ինն ամիս առաջ է տօնուել՝ ապրիլի 7-ին), այլ յիշատակում ենք այն հետեւեալ չորս պատճառներով:

Նախ՝ որովհետեւ Զրիստոսի Ծննդեան նախատօնակն ենք կատարում, ինչպէս ասաց շաբաթ օրը՝ Զրիստոսի Յարութեան [նախօրէին]:

Երկրորդ՝ քանզի Ադամը մարգարեացաւ Զրիստոսի Գալստեան մասին՝ կնոջը կոչելով ամենայն կենդանեաց Մայր¹⁰, որը կանանց մէջ ամենօրինեալ սուրբ Կոյս Մարիամ

8 Տե՛ս Ղուկ. Ա 28:

9 Ղուկ. Ա 31

10 Ծն. Գ 20

Աստուածածինն է. նմանապէս եւ՝ մարգարէները, որոնք մարգարէանալով՝ Քրիստոսի Գալուստից առաջ սուրբ Կոյսին էին տեսնում, ինչպէս որ Գեղժօնը իմանալի գեղմն ու ցօղը տեսաւ¹¹: Արդ, այսօր նշում ենք եւ երգում, թէ՛ եկաւ Տէրը եւ իրականացրեց նրանց խօսքը՝ յայտնելով [այն] խորհուրդը, որ ծածկուած էր յաւիտեաններից:

Երրորդ՝ քանզի հրեշտակի աւետիսը, որ ողջոյնով տրուեց Կոյսին, այսօր իրականացաւ. ինչի համար էլ յայտնուեց [Աստուած]: [Եւ] ի լուր ամենքի հրեշտակի աւետման երգն ենք երգում՝ ասելով. «Ուրախացի՛ր, Սրբուհի՛»: Այն, ինչ այնժամ ծածկապէս յայտնուեց սուրբ Կոյսին, մարգարէութեան համաձայն կատարուելուց յետոյ յայտնապէս երգում ենք նոր ուրախութեամբ:

Չորրորդ՝ քանզի երեք տօներն էլ միեւնոյն խորհուրդն ունեն: Աւետման հետ Բանն Աստուած իջաւ Կոյսի արգանդը եւ մարդացաւ: Եւ Աստուծոյ Բանի իջնելը ու որպէս մարդ գոյատրուելը հրեշտակը ծնունդ է կոչում՝ Յովսէփին ասելով. «Նրանում Մնուածը Սուրբ Հոգուց է»¹²: Եւ [Քրիստոսի] Մնունդը երկրի վրայ՝ կուսական անգանդից էր, եւ հովիւները տեսան, ու մոգերը երկրպագեցին: Իսկ Մկրտութիւնը դարձեալ վերստին ծնունդ է կոչում: Սա՛ ըստ իրողութեան, [իսկ] ըստ անուանումների դարձեալ [միեւնոյն խորհուրդն ունեն]. քանզի Աւետու՛մը Բանն Աստուծոյ յայտնութիւնն է, որ մարմնացաւ, ինչպէս աւետարանիչն է ասում. «Եւ Բանը մարմին եղաւ»¹³: Նոյնպէս եւ Մնունդը յայտնութիւն է կոչում, ինչպէս [ս. Գրիգոր] Աստուածաբանն է ասում. «Այսօր Աստուծոյ Յայտնութեան տօնն է, քանզի Աստուած ծնուելով երկրի վրայ երեւաց»: Իսկ Մկրտութիւնը վկայուեց

11 Տե՛ս Դատ. 2 36-40:

12 Մատթ. Ա 20

13 Յովհ. Ա 14

Հօրից. «Դա է Իմ սիրելի Որդին»¹⁴. Եւ «Սուրբ Հոգին աղաւանակեցաւ իջաւ Նրա վրայ»¹⁵ ողջ աշխարհին յայտնելով Նրա Աստուածութիւնը:

Այսպէս, երեք տօներն էլ միեւնոյն խորհուրդն ունեն՝ թէ՛ ըստ իրողութեան, թէ՛ ըստ անուանումների: Այս պատճառով այսօր յիշատակում ենք Աւետումը, իսկ վաղը՝ տօնում Մնունդն ու Մկրտութիւնը՝ եւ ութ օր շարունակ յիշատակում Աւետումը՝ Մնունդն ու Մկրտութիւնը համատեղ տօնելով:

Գ

Տօնը գիշերն է սկսում, քանզի նախ՝ աշխարհի մէջ լինելով՝ մթնած ենք մեղքի խաւարով:

Երկրորդ՝ քանզի Քրիստոսի առաջին Գալուստը ծածկապէս եղաւ եւ ո՛չ ինչպէս Երկրորդը, երբ յայտնապէս պիտի ծագի երկնքից՝ Իր առջեւ հուր բորբոքելով: Այլ առաջին երեւումը ծածուկ էր եւ խոնարհութեամբ՝ առանց ոտնաձայնի, ինչպէս գեղմի վրայ իջնող ցօղը¹⁶: Այս պատճառով տօնը գիշերն ենք սկսում:

Երրորդ՝ քանզի Քրիստոս մարմնով կէսգիշերին ծնուեց Բեթղեհէմում (միեւնոյն ժամին էլ յարութիւն առաւ գերեզմանից), եւ [այս] յայտնի է բացօթեայ հովիւներից, որոնք իրենց հօտը պահպանելիս լսեցին երկնաւոր զօրքերի բազմութեան ձայնը¹⁷:

Չորրորդ՝ այն է խորհրդանշում, որ Քրիստոս մեր կեանքի խաւարում որպէս լոյս ծագեց եւ լուսաւորեց հաւատացեալներին, ինչպէս Դաւիթն է ասում. «Խաւարի մէջ Լոյս ծագեց արդարներին»¹⁸, եւ դարձեալ՝ «Խաւարի մէջ եւ մահուան ստուերում նստած ժողովրդի վրայ Լոյս ծագեց»¹⁹, ինչ ինքը Դաւիթն էր հայցում՝

14 Մատթ. Գ 17

15 Մատթ. Գ 16

16 Տե՛ս Դատ. 2 36-40:

17 Տե՛ս Դուկ. Բ 8-10:

18 Սաղմ. ձԺԱ 4

19 Տե՛ս Մատթ. Դ 16:

ասելով. «Լոյս տուր, Տէ՛ր, իմ աչքերին»²⁰, եւ թէ՛ «Առաքի՛ր, Տէ՛ր, Քո Լոյսն ու Քո Ճշմարտութիւնը»²¹: Քրիստոսի մասին էր ասում, որ լուսաւորեց մեր հոգու աչքերը՝ անհաւատութիւնից [բերելով] հաւատի լոյսի, անգիտութիւնից՝ ճշմարիտ գիտութեան եւ մեղքերից՝ արդարութեան: Նաեւ շատերի մարմնաւոր աչքերը լուսաւորեց: Այս պատճառով Քրիստոս Լոյս եւ Արդարութեան Արեգակ է կոչուում:

Հինգերորդ՝ Հին Օրէնքը [Նորի] ստուերն էր ու գիշեր էր, եւ մարգարէները, ինչպէս աստղեր, սակաւ լուսաւորեցին օրէնքով՝ Քրիստոսի նախակարապետները լինելով, իսկ մեր Տէրը ստուերի մէջ մեզ որպէս Լոյս ծագեց, ինչպէս գրուած է. «Լոյսը խաւարի մէջ լուսաւորում է»²², քանզի մեզ տուեց արեգակի պէս պայծառ Նոր Օրէնքի լոյսը: Այս պատճառով գիշերն ենք տօնում Քրիստոսի Ծնունդը, որ մեզ համար եղաւ արդարութեան Արեգակը՝ ըստ Մաղաքիայի²³, քանզի Նա ստուերը լոյսի վերածեց եւ նմանութիւնը՝ իրականութեան:

Վեցերորդ՝ օրինակը լինելով Քրիստոսի վերջին Գալստեան, որ գիշերով է լինելու, ինչպէս Աւետարանն է ասում. «Կէսգիշերին ձայն լսուեց. «Ահա՛, գալիս է Փետսան»»²⁴: Այս պատճառով առաջին Գալստեան տօնը գիշերն ենք սկսում եւ տօնում:

Դ

Այս տօնը Եկեղեցին տօնում է ինը օր շարունակ, որովհետեւ նախ՝ եօթ օրը խորհրդանշում է արարչութիւնն ու այս կեանքը. ութերորդը խորհուրդն է մշտակայ հանդերձեալ կեանքի, որի մէջ մարդիկ պիտի խառնուեն հրեշտակների դասերին

20 Հմմտ. Մաղմ. ՃԺԱ. 4:

21 Մաղմ. ԽԲ 3

22 Յովհ. Ա 5

23 Տե՛ս Մաղ. Դ 2:

24 Մատթ. ԻԵ 6-7

եւ տօնեն գերաշխարհիկ [տօնը]. իսկ իններորդը, առանձնակի զատուած, ցոյց է տալիս ամենայնի գոյանալուց առաջ Սուրբ Երրորդութեան [Անձերի] փառաւորումը Միմեանցից:

Երկրորդ՝ ինը թիւը դարձեալ հրեշտակների ինը դասերն է խորհրդանշում, քանզի նրանք տօնում են մեզ հետ, եւ մենք նրանց հետ՝ սպասաւորում:

Եւ երրորդ՝ քանզի Բանն Աստուած ինն ամիս բնակուեց Կոյսի որովայնում: Այս պատճառով [Նրա] Ծնունդից յետոյ ինն օր տօնում ենք:

Իսկ այն, որ Պատարագ ենք մատուցում երեկոյեան եւ առաւօտեան, երկու իմաստ ունի: Նախ՝ ինչպէս ասացինք, Քրիստոսի Ծնունդը կէսգիշերին էր, իսկ Մկրտութիւնը՝ կէսօրին: Արդ, երեկոյեան Պատարագը Ծննդեան խորհրդով է, իսկ առաւօտեանը՝ Մկրտութեան: Եւ դարձեալ՝ քանզի Քրիստոս երկու Ծնունդ ունի. մէկը՝ Հօրից, յաւիտեաններից առաջ, հրեշտակներից ու մարդկանցից ծածուկ եւ անիմանալի, որ երեկոյեան Պատարագի խորհուրդն է. իսկ միւրը՝ մօրից, ժամանակի մէջ, յայտնի հրեշտակներին եւ մարդկանց, ինչպէս որ հովիւները, հրեշտակներին խառնուած, փառաւորում էին, որ առաւօտեան Պատարագի խորհուրդն է: Զանգի [Նրա] կուսական Ծննդեամբ մեզ առաւօտ եղաւ, եւ լոյս ծագեց աշխարհին:

Իսկ օրուայ [տօնի] անունը ճրագալոյց է, ճրագալոյց զամ ճրագալոյս:

Արդ, ճրագալոյցն այն է, որ կանթեղ եւ ճրագ ենք լուցանում, այսինքն՝ վառում եւ պատարագում երեկոյեան: Ճրագալոյց՝ քանզի ճրագով եւ երեկոյեան լուծում ենք պահքը: Իսկ ճրագալոյսը բազում խորհուրդներ ունի: Նախ՝ քանզի տօնի Տէրը իմանալի Լոյս է, որ ծագեց աշխարհում. ինչպէս Ինքն ասաց. «Ես՝ Լոյսս, աշխարհ եկայ»²⁵: Երկրորդ՝ լոյսը [այն] աստղն

25 Տե՛ս Յովհ. Ա 9, Գ 19:

է խորհրդանշում, որ առաջնորդեց մոզերին եւ մտնելով քարայրը՝ կանգնեց այնտեղ, որ Մանուկն էր. այս պատճառով այսօր երեկոյեան, բազմաթիւ մոմեր վառած, եկեղեցի ենք մտնում: Երրորդ՝ ճրագալոյսն ընկալում է որպէս առժամանակեայ լոյս, որ խորհրդանշում է Յովհաննէս Մկրտչին, ինչպէս Տէրն էր ասում. «Նա էր վառուող ճրագը, եւ դուք միառժամանակ ցնծացիք նրա լոյսով»²⁶: Չորրորդ՝ ճրագալոյսն ընկալում է որպէս աղօտ ճառագում, որ խորհրդանշում է մարգարէներին, որոնք Յովհաննէսից առաջ տեսիլքներով ճանաչեցին եւ իմացան Բրիստոսի Գալուստը: Հինգերորդ՝ ճրագալոյսն ընկալում է որպէս մեծ անտարանիչ, որ խորհրդանշում է Հին Օրէնքը, ինչպէս Դաւիթն էր ասում. «Քո խօսքերն իմ ոտքերի ճրագն են եւ իմ տան ճանապարհի լոյսը»²⁷: Քանզի Օրէնքը մեծ Աւետարանն էր, որ տրուեց կատարելներին: Վեցերորդ՝ ինչպէս [ս. Գրիգոր] Աստուածաբանն էր ասում, թէ այսօր նախօրէն ու նախատօնակն է վաղուայ՝ մեծ Լոյսի ծագման, եւ ինչպէս որ թագաւորի գալատեանը նրան սիրողները նախ այդ անտիսից են ուրախանում եւ պատրաստութիւն տեսնում ու ջահերով ընդառաջ գնում, նոյնպէս եւ մենք [նախապէս այս երեկոյ] Բրիստոսի Ծննդեան եւ Յայտնութեան նախատօնակ ճրագալոյցն ենք կատարում:

Ե

Նախատօնակն այսօր՝ յունուարի 5-ին ենք անում, նախ՝ որովհետեւ յունուարը նոր ամիս է, եւ Բրիստոս մեզ նորոգեց մեղքերի հնութիւնից, որ գործեցինք հինգ զգայարաններով:

Երկրորդ՝ քանզի յունուարը ծննդեան ամիս է թարգմանում, եւ մենք Բրիստոսի երկրային Ծննդեամբ ծնում ենք երկնային՝ հոգեւոր կեանքով: Իսկ յունուարի վեցին

26 Տե՛ս Թովգ. Ե 35:

27 Տե՛ս Սաղմ. ՃԺԸ 105:

ենք տօնում Բրիստոսի Ծնունդը, որ սորհրդանշում է վեցերորդ դարը, երբ Արարիչն Աստուած իջաւ երկիր: Երկրորդ՝ քանզի վեցերորդ օրը ստեղծեց մարդուն. յւ մարդը մարմնի վեցակի շարժմամբ մեղանչեց ու կորաւ. այս պատճառով Բանն Աստուած ամսուայ վեցերորդ օրն է ծնում որպէս Նոր Ադամ եւ փնտրում հին՝ կորած Ադամին ու գտնում, ինչպէս ասում է Անառակ որդու առակից առաջ, թէ քաջ հովիւր իննսունինը ոչխարները թողեց անապատում²⁸, այսինքն՝ երկնքում, որն անապատ է չարիքից, եւ եկաւ փնտրելու մէկ մոլորուած ոչխարին²⁹, որ մարդկային ցեղն է, ինչպէս Դաւիթն էր ասում. «Մոլորուեցի եւ ինչպէս կորուսեալ ոչխար. փնտրի՛ր Քո ծառային»³⁰: Այս խորհրդով բանաւոր հօտի քաջ Հովիւր նախ յայտնուեց անբան ոչխարների հօտի հովիւներին: Քանզի նախկինում մարգարէներին հովիւներից ընտրեց, ինչպէս Մովսէսին, Դաւիթն եւ այլոց, եւ այժմ էլ, Իր Գալստեանը, նախ հովիւներին յայտնուեց, որպէսզի ցոյց տայ, որ նոյն Աստուած է, որ այժմ մարմնով ծնուեց Կոյսից: Երկրորդ՝ հովիւներն աննենգ էին եւ աննախանձ, քանզի մարդկանց մէջ չէին բնակւում, [այս պատճառով] նրանց երեաց՝ ցոյց տալով, թէ ովքեր սրտով մաքուր են նենգութիւնից, նախանձից եւ միւս մեղքերից, նրանք կտեսնեն Աստծուն: Երրորդ՝ քանզի անտուն եւ անօթեւան էին, որը խորհրդանշում է, թէ ովքեր թողնում են աշխարհիկ կեանքը, մայր, հայր, կին, որդի, տուն եւ ազարակ, նրանք կարող են տեսնել Աստծուն: Չորրորդ՝ քանզի զգօն էին եւ անքուն, ինչպէս գրուած է. «Պահպանելով պահում էին իրենց հօտը»³¹, որ նշանակում է, թէ ովքեր յանուն Բրիստոսի չարչարում են իրենց մարմինը, նրանք են հետեւում

28 Տե՛ս Դուկ. ԺԵ 4:

29 Տե՛ս Կոյն տեղում:

30 Սաղմ. ՃԺԸ 176

31 Տե՛ս Դուկ. Բ 8:

Տիրոջ՝ ըստ այս խօսքի. «Ով որ չվերցնի իր խաչը եւ չգայ Իմ Ետեւից, արժանի չէ Ինձ»³²: Հինգերորդ՝ քանզի հովիւները, պարզամիտ եւ տգետ լինելով, աստուածային սքանչելիքի ականատեսն ու քարոզողը եղան. սա ցոյց է տալիս, թէ ով կամենում է իմաստուն լինել ի Զրիստոս, այս աշխարհի յիմարը թող լինի, քանզի Աստուծոյ յիմարը բոլորից իմաստուն է, եւ Աստուծոյ տկարը՝ զօրաւորներից հօգօր³³, ինչպէս առաքեալները, որ տկար էին, տգէտ եւ անտոհմիկ³⁴ եւ ողջ աշխարհից առաւել եղան զօրութեամբ, իմաստութեամբ եւ փառքով: Վեցերորդ՝ քանզի [սրանով] յուսադրեց ժողովրդի պետերին ու հովիւներին, ինչպէս քահանաներին ու առաջնորդներին, որ եթէ սրտով աննախանձ լինեն եւ վարքով՝ առաքինի, իսկ ժողովրդի պահպանութեան մէջ՝ զգօն եւ արի, կարծանանան Աստուածորդու տեսութեանը: Այս պատճառով այսօր նախ հովուանոց ենք գնում՝ սուրբ ժամատուն, ուր ժողովում է քանաւոր հօտը եւ ասում «Տէրն ինձ կհովուի»³⁵ եւ «Որ Հովիւն ես Իսրայէլի»³⁶ սաղմոսները, ապա ընթերցում Հովիւների Աւետարանը. «Եւ հովիւները բացօթեայ վայրում էին»³⁷: Սաղմոսները երկուսն են, քանզի երկնաւորների Հովիւն ու Խնամակալն էր եւ դարձաւ Հովիւը մարդկանց, քանզի Զրիստոսի թէ՛ Աստուածութեանը, թէ՛ մարդկութեանը համապատասխանում է հովիւ անուանումը: Իսկ սաղմոսների միջեւ ալէլուիա, ալէլուիա ասելը խորհրդանշում է հովիւների ընդ-խառնուելը հրեշտակներին, որոնք երգում եւ օրհնում էին Աստծուն: [Քանզի] նրանց պէս մենք էլ այժմ, խառնուելով երկնաւորների դասերին, օրհնում եւ փառաւորում

32 Տե՛ս Մատթ. Ժ 38
 33 Տե՛ս Ա. Կոր. Ա 25:
 34 Տե՛ս Ա. Կոր. Գ 10:
 35 Սաղմ. ԻԲ 1
 36 Տե՛ս Սաղմ. 2Թ 2:
 37 Տե՛ս Ղուկ. Բ 8:

ենք Զրիստոսի Ծնունդը: Բանզի ալէլուիան հրեշտակային երգ է եւ թարգմանում է՝ օրհնեցէ՛ք եւ գովեցէ՛ք Տիրոջը:

Այնուհետեւ գնում ենք մտոր՝ Ծննդեան այրը, քանզի քարայրում ծնուեց Զրիստոս Փրկիչն ու դրուեց [աւնասունների] մտւորում, եւ հովիւներն այնտեղ գնացին:

Իսկ ինչո՞ւ քարայրում ծնուեց Զրիստոս: Նախ՝ մարդահամարի պատճառով. քանզի բազմամբոյս էր քաղաքը, եւ իջեւանելու տեղ չկար, ու երեկոյեան [քարայրին] հասնելով՝ այնտեղ ծնուեց աշխարհի Փրկիչը³⁸: Երկրորդ՝ ըստ [Իր] խոնարհութեան՝ որպէս աղքատ մօրից՝ աղքատիկ վայրում է ծնում եւ բազում [աւնասունների] մտւորում, որպէսզի մենք Իր աղքատութեամբ հարստանանք: Երրորդ՝ ետջրհեղեղեան այս խորհրդով. քանզի Նոյի անդրանիկ որդին՝ Սէմը, մարգարէաբար Ադամի նշխարները թաղեց Գողգոթայում, իսկ Եայի նշխարները՝ այդ քարայրում, որպէսզի Եան ողջանայ Աստուածածնով եւ ազատի ծննդեան անձօրից, իսկ Ադամը կենդանանայ Խաչի միջոցով եւ ազատուի դժոխքից: Իսկ սուրբ Ծննդեան մասին երկու սաղմոս է ասում, քանզի Զրիստոս երկու Ծնունդ ունի. նախ՝ Հօրից՝ յալիտեաններից առաջ, եւ ապա՝ Կոյսից՝ ժամանակի մէջ, ինչպէս որ ասում է. «Տէրն ասաց Ինձ. «Իմ Որդին ես Դու»»³⁹. սրանով Բանի Ծնունդ է ասում, որ ժամանակներից առաջ է: Իսկ ասելով. «Ես այսօր Քեզ ծնեցի»⁴⁰ [ցոյց է տալիս] երկրորդ՝ անձառելի միաւորութեամբ Ծնունդը Կոյսից. այսինքն՝ որ Բանն Աստուած մարմնացաւ եւ երկրի վրայ [որպէս] մարդ ծնուեց: Եւ թող այս օրը հերձուածողները չհամարե՛ն սկիզբը, ինչպէս միւս սաղմոսում անժամանակ Ծնունդի մասին ասուածը. «Քեզ ծնեցի նախքան Արուսեակը»⁴¹: Ապա ընթերցում

38 Տե՛ս Ղուկ. Բ 7:
 39 Սաղմ. Բ 7
 40 Նոյն տեղում
 41 Տե՛ս Սաղմ. ձԹ 3:

Լ Մննդեան Աւետարանը. «Եւ Յիսուս Բրիստոսի ծնունդն էր այսպէս»⁴²:

Այնուհետեւ մտնում են եկեղեցի, որը խորհրդանշում է Երկինքը: [Սա] այն է, ինչ փնտրում էր Դաւիթը՝ ասելով. «Քուն չեմ տալու աչքերիս, ոչ էլ նինջ՝ արտեւանունքներին, մինչեւ որ գտնեմ Յակոբի Տէր Աստուծոյ բնակութեան վայրը»⁴³: Սրանից յետոյ ասում են «Խոնարհեցո»-ն եւ «Ապրեցո»-ն⁴⁴:

Այստեղ հարկ է նշել, որ այս երկու գլխաւոր տօները՝ [Աստուածայայտնութեան եւ Ջատկի.] Յակոբ Տեառնեղբայրը հաստատեց նախաստեղծների, այսինքն՝ Ադամի ու Եւայի առնչութեամբ. Յայտնութեան տօնը՝ Եւայի, իսկ Ջատկիը՝ Ադամի: Այս պատճառով այս տօնին կարգուած են «Խոնարհեցո»-ն եւ «Ապրեցո»-ն, իսկ Ջատկին՝ ոչ: Քանզի [այստեղ] դեռեւս հիւանդ ենք հոգով եւ նուաղած ձայնով աղաչում ենք մարդասէր Բժշկին. «Խոնարհեցրո՛ւ, Տէ՛ր, Քո ունկը մեր շուրթերին, լսի՛ր մեր ցաւերն ու բժշկի՛ր մեզ մեղքերի ցաւից եւ փրկի՛ր անօրէնից՝ կորստեան որդի սատանայից»: Եւ այս լսեց իմաստուն ու գթած Բժիշկը եւ խոնարհուեց մեզ բժշկելու, եւ մեր փրկութեան եւ առողջութեան սկիզբը Բրիստոսի Մնունդն է, իսկ լրումը՝ [Նրա] Մահն ու Յարութիւնը: Այս պատճառով [այնժամ] անկարօտ ենք աղաչանքների՝ որպէս կատարեալներ՝ առողջացած հոգով, իսկ այժմ պաղատում ենք՝ Նրա անարատ Մօրը բարեխօս ունենալով իրենից ծնուած Որդուն:

Չ

Այսօր ընթերցում ենք Արարածոց գրքի սկզբնամասից, որովհետեւ այդ ցոյց է տալիս, որ այսօրուայ նորածին Մանուկը երկնքի ու երկրի եւ նրանցում եղած ամէն ինչի Արարիչն է:

42 Մատթ. Ա 18

43 Տե՛ս Սաղմ. ձԼԱ 4-5:

44 Այսինքն՝ ՁԵ եւ ձԼԹ սաղմոսները:

Երկրորդ՝ [նրանում պատմում է], թէ ինչպէս մարդը պատուեց Արարչի պատկերով, դարձաւ բոլոր արարածների իշխանը եւ դրուեց դրախտում⁴⁵ եւ [թէ ինչպէս], խախտելով պատուիրանը, արտաքսուեց եւ անէծք ու մահ ժառանգեց⁴⁶:

Երրորդ՝ ցոյց է տալիս, որ նոյն Արարչի կողմից օրհնուեց եւ նորոգուեց առաջին անէծքից Աստուածածին Կոյսի միջոցով, որ Կենաց Մայրը դարձաւ: Քանզի ստուգապէս Կեանք է մեր Տէրը՝ Յիսուս Բրիստոս, [ինչպէս] որ ասաց. «Եւ եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ Կեանքը»⁴⁷, որ բոլորիս կեանքի եւ փրկութեան պատճառը եղաւ:

Իսկ այն, որ այսօրուայ ընթերցուածքները տասներկուսն են, բազում խորհուրդներ ունի:

Նախ՝ որովհետեւ տասներկուսն էին Իսրայէլի ցեղերը, որոնց փրկութիւնը քարոզեց մեր Տէրը, ինչպէս որ ասում էր. «Եւ առաքուեցի Իսրայէլի տան կորած ոչխարների համար»⁴⁸:

Երկրորդ՝ ինչպէս որ արեգակը տասներկու կենդանակերպերով է բոլորում տարին, նոյնպէս եւ Արդարութեան Արեգակը՝ կուածին Բրիստոս, տասներկու առաքեալներով կատարեց Իր տնօրինագործութեան տարին:

Երրորդ՝ խորհրդանշում է այն, որ Տէրը եկաւ կատարելու կանխասացութիւնը տասներկու մարգարէների, որ խօսեցին Նրա Մննդեան մասին, որոնք [էլ] դրուած են [տասներկու] ընթերցուածքների կարգում:

Չորրորդ՝ քանզի տասներկուսն են մեր անդամները, որոնք մեղքով ապականուեցին, որոնք էլ վերցնելով՝ Տէրը կատարելապէս աստուածացրեց, որի շնորհիւ եւ մենք սրբուեցինք մեր մեղքերի բոլոր անդամներից:

45 Տե՛ս Մե. Բ 8:

46 Տե՛ս Մե. Գ:

47 Յովհ. Ժ 6

48 Տե՛ս Մատթ. Ժ 6:

Հինգերորդ՝ քանզի տասներկուսն էին եղիմի աղբիւրները, որոնցով անապատում յագեցաւ ծարաւած ժողովուրդը⁴⁹, ինչպէս այստեղ՝ եկեղեցում՝ չարիքից ազատ հոգեւոր անապատում ժողովուածներիս համար ախորժելի տասներկու ընթերցուածքները:

Վեցերորդ՝ Յեսուն տասներկու քարերից սեղան շինեց եւ այնտեղ Աստծուն ողջակէզներ պատարագեց⁵⁰, եւ Սուրբ Գիրքը մեր հոգիների համար բաշխուած օրինաւոր կերակուր է, ինչպէս որ Տէրն է ուսուցանում, թէ՛ «Ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ Աստուծոյ ամենայն խօսքով»⁵¹:

Եօթերորդ՝ տասներկուսն էին Տաճարում Սողոմոնի պատրաստած աւազան-ծովը կրող եզները⁵²: Նմանապէս տասներկու ընթերցուածքները աշխարհի ծովում մեր մեղքերի սրբարանն ու լուացարանն են, որոնցով հանապազ եկեղեցում մաքրոււմ ենք մեղքերից եւ մտնում երկնային Տաճար:

Ութերորդ՝ տասներկուսն են տարուայ ամիսները. եւ այս տասներկու ընթերցուածքները մինչեւ մեր կեանքի աւարտը ամէն օր խրատիչ են մեզ համար:

Իններորդ՝ տասներկուսն են Սուրբ եւ Ջուզական Երրորդութեան անուան գրերը՝ Հայր, Որդի, Հոգի. եւ այս տասներկու ընթերցուածքները ծանուցում են մեզ բոլոր արարածների Արարչին՝ համագոյ եւ զուգափառ Սուրբ Երրորդութեանը՝ Մի բնութեամբ եւ Մի իշխանութեամբ:

Տասներորդ՝ Քրիստոսի հանդէպ ունեցած մեր հաւատը, յոյսը եւ սէրը տասներկու գրով են դրոշմուած. եւ այս տասներկու ընթերցուածքներն ուսուցանում են քրիստոնէական ուղղափառ հաւատը, մեր փրկութեան յոյսը եւ Քրիստոսի հանդէպ կատարեալ սէր ունենալը:

Այս է տասներկու ընթերցուածքների խորհուրդը:

49 Տե՛ս Ել. Ժ 27, Թ. 19 9:

50 Տե՛ս Յես. 7:

51 Տե՛ս Յով. 4:

Իսկ վերջին ընթերցուածքը Դանիէլի [գրքից է՝ այն հատուածը, ուր ասոււմ է,] որ Նաբուգոդոնոսոր [արքան] վաթսուն կանգուն [բարձրութեամբ կռա]յատկեր կանգնեցրեց եւ [որ նրան չերկրպագողների համար] հուր բորբոքեց. եւ [երզոււմ է] երեք մանուկների երզը, որոնք [չերկրպագեցին արձանին եւ հուրը նետուեցին, սակայն] փրկուեցին հրից եւ օրհնոււմ էին Աստծուն⁵³:

[Եւ սա է ընթերցոււմ վերջում,] քանզի նախ՝ Նաբուգոդոնոսորը խորհրդանշոււմ է իմանալի սատանային, եւ նրա կանգնեցրած կռապատկերի վաթսուն կանգուն բարձրութիւնը [խորհրդանշոււմ է մարդկային ցեղի կռապաշտութեան] վեց հազար տարին, իսկ վեց կանգուն [այնութիւնը] այն, որ մարդու վեցեակ շարժմամբ Արարչի վեցօրեայ գործը զանազան մեղքերի միջոցով եղծանել էր կամենում: Իսկ վէմը, որ, առանց ձեռքի պոկուելով սուրբ լեռից, կործանեց պատկերը եւ լցրեց տիեզերքը⁵⁴, խորհրդանշոււմ է Քրիստոս-Վէմին, որ անսերմ յղութեամբ ծնուեց սուրբ Մարիամ-զեռից ու հարուածելով կործանեց կռապաշտութիւնը եւ տիեզերքը լցրեց Աւետարանի քարոզութեամբ: Այս պատճառով բարձր տեղից՝ բեմից է ընթերցոււմ Դանիէլի գրքի այս հատուածը]:

Երկրորդ՝ քանզի երեք մանուկների [կրակից պահպանուելը] ցօղով⁵⁵ խորհրդանշոււմ է Բանն Աստուծուն, որ երկնքից իբրեւ ցօղ եւ անձրեւ իջաւ սուրբ Կոյսի արգանդը եւ հանգցրեց թշնամու չար բոցի զօրութիւնը: Իսկ այն, որ հուրն այրեց քաղէացիներին⁵⁶, այն է խորհրդանշոււմ, թէ սատանան, որ բորբոքեց մարդկանց ցանկութեան բոցը, եօթնապատիկ ինքն է այրոււմ անշէջ հրով, ինչպէս Դաւիթն

52 Տե՛ս Գ Թաղ. է 25, 44:

53 Տե՛ս Դան. 4:

54 Տե՛ս Դան. Բ 34-35:

55 Տե՛ս Դան. Գ 50:

56 Տե՛ս Դան. Գ 48:

է ասում. «Տէ՛ր, եօթնապատիկ վճարի՛ր մեր դրացիներին իրենց ներսում այն նախատինքը, որով նախատեցին մեզ»⁵⁷, եւ ինչպէս Տէրն է հրամայում. «Հեռացէ՛ք Ինձանից (դէպի) հուրը, որ պատրաստուած է սատանայի համար»⁵⁸:

Երրորդ՝ ինչպէս որ երեք մանուկները բոլոր արարածներին կոչ էին անում օրհնել Աստծուն, այնպէս էլ Եկեղեցու մանուկներս բաւական չենք՝ փոխարէնը մատուցելու Աստուծոյ մեծամեծ շնորհների դիմաց, եւ երկնքի ու երկրի, ծովի ու ցամաքի եւ բոլոր գոյերի հետ միացած՝ օրհնութիւն եւ փառաբանութիւն ենք առաքում ի բարձունս Աստծուն, քանզի քաղցր է Նրա ողորմութիւնը, որ (մեր) փրկութեան համար առաքեց Իր Միածին Որդուն:

Այլեւ օրհնութի՛ւն եւ փա՛ռք Աստուծոյ մարմնացեալ Բանին, որ մարմին եղաւ եւ բնակուեց մեր մէջ⁵⁹ եւ փրկեց մարդկանց ցեղը սատանայի ծառայութիւնից:

Այլեւ բարեբանութի՛ւն եւ փա՛ռք էակից եւ փառակից Ամենասուրբ Հոգուն, որ մեզ նորոգեց մեղքի հնութիւնից եւ լուսաւորեց վերստին ծնունդով՝ որդեգրուելու երկնաւոր Հօրը եւ մեր Տէր Յիսուս Զրիստոսի մէջ ժառանգելու երկնքի արքայութիւնը:

Եւ գոհութի՛ւն ու երկրպագութի՛ւն Ամենասուրբ Երրորդութեանը այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

57 Սաղմ. ՀԹ 12

58 Տե՛ս Մատթ. ԻԵ 41:

59 Յովհ. Ա 14